ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11ապրիլի 2014 թվականի N 57-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի, 10-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով և հիմք ընդունելով «Քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2014թ. ապրիլի 9-ի N 316-Ա որոշմամբ տրված համաձայնությունը, **ո ր ո շ ու մ ե մ՝**

1. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի՝

1) կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի գլխավոր մասնագետների քաղաքացիական ծառայության պաշտոնների (ծածկագիր՝68-2.3-13,68-2.3-19) անձնագրերի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<5.Բաժնի գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի պետը կամ Բաժնի գլխավոր մասնագետը: Բաժնի գլխավոր մասնագետը Բաժնի պետի կամ Բաժնի գլխավոր մասնագետի բացակայության դեպքում փոխարինում է նրանց>>:

2) տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի՝

ա. գլխավոր մասնագետի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 68-2.3-30) անձնագրի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<5.Բաժնի գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի պետը կամ Բաժնի առաջատար մասնագետը: Բաժնի գլխավոր մասնագետը Բաժնի պետի կամ Բաժնի առաջատար մասնագետի բացակայության դեպքում փոխարինում է նրանց>>:

բ. առաջատար մասնագետի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝68-3.2-33) անձնագրի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<5.Բաժնի առաջատար մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետը:

Բաժնի առաջատար մասնագետը Բաժնի գլխավոր մասնագետի բացակայության դեպքում փոխարինում է նրան>>:

2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Վ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2014. ապրիլի 11
ք. Կապան